

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

**ՄԻՐՈ՞Ղ ԵՄ, ՆԱԽԱՆՉՈ՞Տ ԵՄ,  
ԿԱՏԵ՞Ս ՆՄԱՆՎ**


**ԱՅՍ ՆԱՄԱԿԸ ՔԵԶԻ Է ԿԱՐԳԱՎ**

Ներկայիս մեծ է թիւը անոնց, որոնք միշտ նախանձով կ'ապրին, երբ իրենց եղբոր յաջողութիւնը տեսնեն յատկապէս, երբ ան նիւթապէս կամ արհեստով եւ կամ իր ուսուցումներուն համար կը յարգուի շատերուն կողմէ: Նախանձոտները, երբ այս տեսնեն, կը հային ու կը մաշին, բամբասանքի խօսքեր կը յօրինեն անոր մասին եւ Աստուծոյ կամքին հակառակ կը շարժին, որ իրենց եղբոր այդ յաջողութիւնը չնորհած է: Ահաւասիկ թէ ինչու, նոյնիսկ եթէ նախանձոտը մեծապէս ճգնի եւ բազմաթիւ առաքինութիւններու տէր ըլլայ, կուսական սրբութիւն ունենայ, օրուան ընթացքին պահեցողութեամբ եւ ճգնութեամբ ինքզինքը մաշեցնէ գիշեր ու ցերեկ, քուրձով եւ մոխիրով մշտահոս արցունքներ թափէ, իր ողորմութիւններովը աղքատանայ, մեծամեծ հրաշքներ գործէ, աղօթքներով եւ փառաբանութեամբ երկինքի հրեշտակներուն նմանի, նոյնիսկ մարտիրոսանայ ու կրակի մէջ ալրի եւ սակայն իր սրտին մէջ նախանձ եւ չարութիւն ունենայ, մարդասպաններէ եւ շնացողներէ աւելի պիղծ եւ մեղքերու մէջ լողացող ամբարիշտներէն աւելի ամբարիշտ պիտի ըլլայ: Ո՞ր չարիքը ուրեմն կրնայ աւելի ժանտագոյն ըլլայ, քան նախանձը, որ կրակէն աւելի այրող է, սուրէն աւելի բնաջնջող է զայն ունեցողները: Ո՞վ կրնայ հանդուրժել այդ բոցին եւ կամ ի՞նչ տեսակի ներում պիտի ունենան նման սատանայական անձերը:

**Յ. Մանդակունի**

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏ ԵԼԻՒՔՆԵՐ**

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Ս. ՊԱՏԱՐԱԳ**



ՊԼՏՎՐԼԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՏՈՒՄ

**2.- Պատրաստութիւն ընծաներուն**

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՅՈՒՆ

Դպիւրները հաւատացեալներուն հաւատքին ու զգացումներուն թարգմանը հանդիսանալով կը կը պատասխանեն.- «Դո՛ն ես միակ Սուրբը, դո՛ն ես միակ Տէրը, Յիսուս Քրիստոս, Հայրն Աստուածը փառաւորելու համար: Ամէն»:

Դպիւրներուն դրսեւորած հաւատքը կը նուիրագործուի պատարագիչ քահանային հաստատումով, թէ արդարօրէն՝ «Օրհնեա՛լ ես, Սո՛ւրբ Հայր, Աստուած ճշմարիտ»: «Օրհնեա՛լ ես, Սո՛ւրբ Որդի, Աստուած ճշմարիտ»: «Օրհնեա՛լ ես, Սո՛ւրբ Հոգի, Աստուած ճշմարիտ»:

Դպիւրներ կը գովերգեն Սուրբ Երրորդութեան փառքը, իսկ պատարագիչ քահանան ...

Շարունակելի



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ**



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՌՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԸ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 19 ՅՈՒՆԻՈՒԱՐ 2025

ԹԻԻ 3

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԿԱՏՈՒՄԾԱՇՆՉՊԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Ես. 54.1-14: Ա.Տմ. 1.1-11: Յհ. 2.1-11

**ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՅՈԿՅԱՆՆԵՍԻ 2.1-11**

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին: Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ.- «Գինի չունիս»:

«Սա՛յր, մեզի ի՞նչ», - պատասխանեց Յիսուս, - «իմ ժամանակս տակաւին չէ հասած»:

Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն.- «Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՛ք»: Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարտ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն.- «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»:

Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց.- «Հիմա առէ՛ք եւ սեղանապետին տարէ՛ք»:

Անոնք ալ տարին: Սեղանապետը համոտեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին՝ գիտէին: Այն ատեն սեղանապետը փեսային ըսաւ.- «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գինովանա՛ այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր գինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց եւ աշակերտները հաւատացին իրեն:

**ԱՌԱԿ 5**

Թոյլ մի՛ տար, որ օտարներ յագեցան քու զօրութեամբդ, եւ վաստակդ մտնէ ուրիշներուն տունը, որպէսզի օր մը երբ մարմնիդ անդամները տկարանան՝ գոջաս եւ ըսես. «Ինչո՞ւ ես զիս հեռու պահեցի քու խրատդ եւ անտեսեցի յանդիմանութիւններդ, չլսեցի զիս խրատողին թելադրութիւններդ եւ չունկնդրեցի ուսուցչիս խօսքը. քիչ մնացած էր, որ հաւատացեալներու համախմբումին եւ ժողովուրդին մէջ ամէն տեսակ չարիքներու նշանակ դառնայի»:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ԱՆՏՈՆ ԵՒ ԿՐՕՆԻԴԷՍ ՃԳՆԱԻՈՐ

Կապադովկեան Կեսարիոյ մէջ կ'ապրէին այս երկու կրօնաւորները, եւ հանրածանօթ էին իրենց նգնողական առաքինութեամբ: Լուսաւորիչ միասին տարաւ զանոնք Հայաստան եւ երբ Տարօնի Ինակեան մենաստանը հաստատեց յանուն Յովհաննու Կարապետին, անոնց եւ իրենց ընկերակցողներուն յանձնեց նոյն սրբավայրին վանական կազմակերպութեան եւ ծառայութեան գործը: Անոնք իրենց այս նորստաց պաշտօնը կատարեցին ամենայն նախանձախնդրութեամբ, յաճախ ընդունելով նաեւ Լուսաւորիչի այցելութիւնը: Իբրեւ քառասուն տարի նուիրեալ ծառայութեամբ ապրել եւ գործել վերջ, խաղաղութեամբ կնքեցին իրենց կեանքը եւ թաղուեցան հոն Դ. Դարուն առաջին կիսուն վերջերը:

### ԽՐԱՏ՝ ԲՈՂՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ ՀԱՒԱՏՔԻ ՄԱՍԻՆ

*Հաւատքը մարդուն սիրտին մէջ արմատացած տունկ է, որուն արմատը՝ Հայրն է, արմատին վրայ գտնուող ոստը՝ Որդին է, տունկին եւ ոստին վրայի անթառամ ծաղիկը՝ Ս. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են, որովհետեւ պտուղը՝ արմատէն, ոստէն եւ ծաղիկէն կը յառաջանայ, ինչպէս բարի գործերը՝ հաւատքէն: Ինչպէս, որ ծառը առանց պտուղի գեղեցիկ չերեւիր եւ առանց ծառի պտուղ չըլլար, նոյնպէս հաւատքը առանց գործի վայելուչ չէ, ոչ ալ գործերը՝ առանց ճշմարիտ եւ ուղիղ հաւատքի:*

## ՀՐԹՈՒՄ ՊԱՏԱՍԵԱՆ

### ՀՐԱԺԱՐԻՄՔ

Ի՞նչ է «Հրաժարիմք»-ը: Հաւատացեալներ գիտեն, թէ Մեծ Պահոց շրջանին, Արեւագալի ժամերգութեան առնելով, ինչպէս նաեւ մկրտութեան խորհրդակատարութեան առնելով բոլորն ալ դէպի արեւմուտք կը դառնան եւ երեք անգամ «հրաժարիմք»-ը կ'արտասանուի:

«Հրաժարիմք»-ը կը հրաժարիմք բային գրաբար ձեւն է:

«Հրաժարիմք»-ը արտասանելով կը մերժեմք, կը հեռանամք եւ կը հրաժարիմք սատանայի բոլոր տեսակի խաբէութիւններէն, մտածումներէն, պատրանքներէն, եւ սատանայի բոլոր տեսակի գործակիցներէն:

«Հրաժարիմք»-ի առնելով Արեւմուտք կը դառնանք, որ հակառակ կողմն է Արեւելին: Եկեղեցականօրէն Արեւելք կը խորհրդանշէ Աստուծոյ ուղղութիւնը: Աստուծոյ Գառը կը գտնուի Արեւելի, անոր համար մեր եկեղեցւոյ բոլոր խորանները կը նային դէպի Արեւելք: Արեւելքը կը խորհրդանշէ Լոյսը, Աստուծոյ գիտութիւնը: Արեւմուտքն ալ Աստուծոյ հակառակ ուղղութիւնն է:

### ՀՐԱԺԱՐՈՒՄ

Կը հրաժարիմք Սատանայէն եւ անոր բոլոր տեսակի խաբէութիւններէն, անոր պատրանքներէն, խորհուրդներէն, նամբանքներէն, անոր չար կամքէն, անոր չար հրեշտակներէն, չար գործակիցներէն, անոր չար կեանքը կատարողներէն, եւ անոր ամբողջ չար գործութեան, ամբողջութեամբ կը հրաժարիմք:

*ՕՐԹԻ ԳԻՐՔԷՆ*

## Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

### ՄԵՂՔԻ ԲԵՈՂ ՅԱՆՁՆԵՆՔ ՅԻՍՈՒՍԻ

«Ինծի եկէք դուք բոլորդ, յոգնածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի» (Մտ. 11:28): Մեղքը կը յոգնեցնէ մարդ արարածը: Մեղաւոր մարդը, մանաւանդ իր մեղքերը չխոստովանող մարդը բեռնաւորուած մըն է, այլ խօսքով, բեռնակիր մըն է: Զրիստոս կոչ կ'ուղղէ մեղքի բեռէն եւ անոր պատճառած յոգնածութենէն ազատիլ ուզողներուն՝ իրեն գալու:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՅՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Եթէ անպիղջ մեղաւորներ ենք, գիտնա՛նք, որ յոգնած եւ բեռնաւորուած ենք եւ կարիքը ունինք հանգիստի: Զրիստոսէ վատ ուրիշ մէկը չի կրնար հանգստացնել մեզ մեր մեղքերէն, որովհետեւ Զրիստոսէ վատ ուրիշ մէկը չմեռաւ մեր մեղքերուն համար: Չունի՞նք մեր կեանքին մէջ մեզ անհանգստացնող մեղք մը որմէ ձերբազատիլ կ'ուզենք: Չունի՞նք մոլութիւն մը, որ մեզ յոգնեցուցած է եւ բեռ դարձած է մեզի համար: Եթէ ունինք, բերենք վանիկա Զրիստոսի, որպէսզի առնէ վանիկա ու խաչին վրայ գամէ: Յիսուս աշխարհ եկաւ բոլորիս մեղքի աշխարհէն եւ խաւարէն դուրս բերելու եւ մեզ լոյսի որդիներ դարձնելու: Միանա՛նք իրեն:

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՋԵՍ...

### ԵՐԲ ՏՐԱՄԱԳԻՐ ԵՍ ԱՎԱՆՋՆԵՐԳ ԲԱՆԱԼՈՒ ԱՏՈՒԾՈՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ ԼՍԵԼՈՒ ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 78

Լսեցէ՛ք, ինչ որ կ'ուսուցանեմ, ո՛վ իմ ժողովուրդս, ականջ դրէ՛ք ըսելիքներուս: Օրինակ մը տամ, մեր անցեալին վերաբերող խորհուրդներ պիտի ներկայացնեմ: Բաներ՝ որոնք լսեցինք ու գիտցանք, որոնք մեր հայրերը պատմեցին մեզի: Մենք մեր վաւակներէն պիտի չպահենք, այլ՝ գալիք սերունդներուն պիտի պատմենք Տիրոջ հպօր գործերը՝ օրհնեցութեան արժանի, անոր կատարած սքանչելի գործերը: Անիկա իր պատուիրանները տուաւ Յակոբի սերունդներուն, իր Օրէնքը տուաւ Իսրայէլի ժողովուրդին, եւ մեր հայրերուն հրահանգեց՝ իրենց վաւակներուն սորվեցնել վանոնք, որպէսզի գալիք սերունդը եւս, որ դեռ աշխարհ պիտի գայ, գիտնայ՝ եւ ինք իր կարգին պատմէ յաջորդ սերունդին: Որպէսզի նոր սերունդները իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնեն, չմոռնան ինչ որ անիկա ըրաւ, այլ՝ անոր պատուիրանները գործադրեն: Անհնապանդ եւ ապաստամբ չըլլան իրենց նախահայրերուն նման, այն սերունդին՝ որ Աստուծոյ չվատահեցաւ, եւ Աստուծոյ հաւատարիմ չեղաւ:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԷՆ**